

Հաջորդող պարզ թվեր

Որոշ թվեր կարելի է ներկայացնել իրար հաջորդող պարզ թվերի գումարի տեսքով:
Օրինակ՝ $8=3+5$: Կան թվեր, որոնց համար այդ ներկայացումը միարժեք չէ:
Հարկավոր է գրել ծրագիր պարզելու համար, թե տրված թիվը քանի եղանակով է
հնարավոր ներկայացնել իրար հաջորդող պարզ թվերի գումարի տեսքով:

Մուտքը

Առաջին տողում տրված է թեստերի t ($1 \leq t \leq 10$) քանակը: Հաջորդ t տողերից
յուրաքանչյուրում տրված է մի K_i ($1 \leq K_i \leq 1000000$) ամբողջ թիվ:

Ելքը

Ելքում պետք է արտածել t տող: i -րդ տողում պետք է արտածել K_i թիվը իրար
հաջորդող պարզ թվերի գումարի տեսքով ներկայացնելու եղանակների քանակը:

Օրինակ

Մուտքը.

3
8
5
9

Ելքը.

1
2
0